ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՌՆՈՒՎԻԼ ԼԵ ԳՈՆԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ,
ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԿԼՈԴ ԲԻԺԵԼԻ ՀԵՏ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԼՈՒՆ ՀԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ: ՍՍՌ



ԱՌՆՈՒՎԻԼԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հունիսի 1, ուրբաթ:

Առավոտյան ժամը 10-ին Փարիզի հայոց առաջնորդարանի դահլիճում Հայոց Հայրապետի նախագահությամբ բացվեց Արևմտյան Եվրոպայի հայ եկեղեցական վարչությունների և հոգևորականների տարեկան համագումարը՝ մասնակցությամբ հոգևորական և աշխարհական մեծ թվով պատգամավորների:

Համագումարը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով: Այնուհետև համագումարի բացումը կատարեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը հետևյալ ուղերձով.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ԺՈՂՈՎԻՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Այս տարի ևս մեր եկեղեցական, խորհրդակցական ժողովը տեղի կունենա Ձեր բարձր նախագահությամբ և ներկայությամբ: Մենք, պարբերաբար, թերևս ոչ կանոնավոր կերպով, Արևմտյան Եվրոպայի թեմի եկեղեցականները և վարչության ներկայացուցիչները կհրավիրենք, որպեսզի խորհրդակցինք և միջոցներ որոնենք, թե ինչպես կարելի է ա՛լ ավելի սերտ համագործակցություն ստեղծել մեր եկեղեցիներու միջև, տեսակ մը այդ համագործակցությամբ և համերաշխությամբ, միություն մը, ամբողջություն մը ստեղծելու համար, որպեսզի ձեռք-ձեռքի տված, աշխատինք մեր եկեղեցիներու պայծառության և եկեղեցական ու թեմական կյանքի առավել ևս կազմակերպման համար:

Դժբախտաբար մեր ժողովուրդը ցրված է աշխարհի չորս ծագերուն և կապրի զանազան երկիրներու մեջ: Հայ եկեղեցին ալ նույնպես կապրի տարբեր երկիրներու պայմաններուն և օրենքներուն համաձայն: Բարեբախտաբար, Ֆրանսայի մեջ կեդրոնացած է Եվրոպայի հայ եկեղեցիներու մեծագույն մասը, հանգամանք, որ լայն դյուրություններ կընծայե եկեղեցվո կազմակերպության և պայծառության համար: Բայց Եվրոպայի թեմին կապված են նաև կարգ մը շրջաններու զանազան երկիրներ, ինչպես՝ Իտալիա, Զվիցերիա և այլ երկիրներ:

Այս կացության մեջ մենք կաշխատինք այսպիսի խորհրդակցությամբ և երբեմն ալ յուրաքանչյուր եկեղեցականի և յուրաքանչյուր եկեղեցվո վարչության հետ առանձին թղթակցությամբ և մեր պարբերական այցելություններով, սերտ միություն մը և համագործակցություն մը ստեղծել Եվրոպայի բոլոր թեմերուն միջև:

Մասնավորաբար անդրադառնալով Ֆրանսայի հայ եկեղեցիներուն, պետք է նշել, որ օրենքներ կան, որոնց հիման վրա է, որ կազմակերպված են մեր եկեղեցիները, ըստ 1901 և 1905 թվականներու պետական սահմանադրության, որով ճշտված են պետության և եկեղեցիներու հարաբերությունները Ֆրանսայի մեջ:

Այդ սահմանադրության համաձայն, յուրաքանչյուր եկեղեցական միավոր իրավունք ունի իր առանձին կանոնադրությունը և անոր համաձայն իր վարչությունը ունենալու և այդ ձևով կազմակերպելու իր եկեղեցական կյանքը: Բայց միմիայն եթե այդ սկզբունքի վրա հիմնվինք, միություն մը չստեղծվիր մեր եկեղեցվո մեջ: Միության կապը հայ եկեղեցվո նվիրապետության կարգն է: Մեր եկեղեցվո նվիրապետությունն է, որ բոլոր հայ եկեղեցիներու միությունը կապահովե: Երբ որ նվիրապետություն կըսենք, անշուշտ ամենեն առաջ կհասկնանք մեր եկեղեցվո ընդհանուր գլուխը, մեր եկեղեցվո պետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Անկե հետո՝ Իրմե նշանակված Իր ներկայացուցիչը և եկեղեցականները, հետևաբար և վարչական կազմը՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ: Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, եկեղեցականներու և վարչական մարմիններու գործակցությամբ միայն կապահովվի մեր եկեղեցվո միությունը թե՛ Ֆրանսայի զանազան հայ եկեղեցիներու միջև և թե՛ առհասարակ Արևմըտյան Եվրոպայի թեմի եկեղեցիներուն միջև:

Ահա այսպիսի խնդիրներ է, որ հաճախ նկատի կունենանք, կխորհըրդակցինք՝ միջոցներ գտնելու և ա՛լ ավելի զորացնելու համար կապը մեր եկեղեցիներու միջև, ըստ հայ եկեղեցվո նվիրապետական կարգերու և նվիրապետական իշխանության: Այսօր, այս խորհրդակցական ժողովը այդ գործն է, որ պիտի կատարե: Ժողովը երկու մասերե պիտի բաղկանա: Այս առաջին մասին մեջ Ձերդ Վեհափառության հայրապետական պատգամեն և հայրական հորդորներեն հետո, մեր եկեղեցականներեն Միլանոյի հոգևոր հովիվ տ. Սարգիս քահանա Սարգիսյան պիտի խոսի Եվրոպայի թեմի եկեղեցականներուն ներդաշնակ գործունեության մասին, Հայաստանյայց եկեղեցվո ավանդության և կարգ ու կանոնի սահմաններուն մեջ: Հետևաբար, Վեհափառ Տեր, խոնարհաբար կհրավիրենք Ձեզ, որպեսզի բացումը կատարեք այս ժողովին Ձեր օրհնությամբ և Ձեր պատգամով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ողջունեց սույն խորհրդակցությունը և հանդես եկավ հետևյալ բովանդակալից ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
(1 հունիսի 1979 թ.)

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն ձեզի բոլորիդ վերստին ողջույն և օրհնություն բերելով, Մեր ուրախությունը կհայտնենք, որ պատեհությունը ունինք ներկա գտնվելու այս ժողովին, ուր հավաքված են Ֆրանսայի և Արևմտյան Եվրոպայի հոգևոր սպասավորները և աշխարհական ներկայացուցիչներ հայ եկեղեցվո համայնքներու։

Այս երրորդ անգամ է, որ պաշտոնական այցով կգտնվինք Ֆրանսա։ Համեմատելով Մեր նախկին այցելությանց հետ, կհաստատենք, թե առավել կազմակերպված տեսանք մեր եկեղեցական համայնքները այս անգամ. առավել ընդհանուր համախմբվածություն եկեղեցիներու շուրջ, առավել միասնականություն և միության ոգի եկեղեցիով և սուրբ Էջմիածինով, ինչ որ բոլորիս համար փափաքելի է, ինչ որ օրինական է եկեղեցական տեսակետով և օգտակար՝ ազգային առումով։

Պարզ է, որ արտասահմանի հայությունը և հայ գաղութներու գոյությունը, սփյուռքը, պետք է նկատենք, ուզենք թե չուզենք, քիչ մը սրտի ցավով, իբրև մնայուն երևույթ։ Արտասահմանի հայությունը, իր ստվար մեծամասնությամբ, իր տեղեն այլևս չի շարժիր։ Հետևաբար հայ սփյուռքը պետք է նկատենք մնայուն իրողություն։ Ուրեմն իրապաշտորեն պետք է մոտենանք իրականության և այն առաքելության, որ բաժին ինկած է մեր եկեղեցիին։ Եվ կրկին առարկայական ըլլալու համար, պետք է ըսել, որ հայ սփյուռքը պահել պահպանելու գործին մեջ, առաջնակարգ դերը, պարտականությունը մեր Հայաստանյայց առաքելական մայր եկեղեղեցիին վրա կծանրանա։ Հայությունը պահպանող ամենահզոր գործոնը, ամենամնայուն և կայուն գործոնը մեր մայր եկեղեցին է։ Հայաստանյայց առաքելական եկեղեցին է ողնաշարը հայ սփյուռքին։ Այս է եղած մեր եկեղեցվո առաքելությունը 1700 տարիներե ի վեր։ Մենք առաջին անգամ չէ, որ սփյուռք ունինք։ Դարերու ընթացքին միշտ սփյուռք ունեցած ենք, այս կամ այն չափով, և մեր մայր եկեղեցին է եղած հայապահպան հրեշտակը։ Այս կարևոր ճշմարտություն մըն է, որ մեր ուշադրութենեն պետք չէ վրիպի։ Նաև հայ եկեղեցին է ամբողջ մեր ազգը միավորողը։ Ո՛չ մեկ կազմակերպություն այս հանգամանքը ունի։ Այս գիտակցությունը, մանավանդ, մենք՝ հոգևորականներս, պետք է ունենանք հաստատապես։ Բայց այս բոլորը կհաստատենք ոչ մեր եկեղեցին գովաբանած ըլլալու կամ մեր՝ հոգևորականներուս դերը արժևորած ըլլալու համար, այլ մանավանդ գիտակցելու համար, թե ինչքան ծանր պարտականություն և պատասխանատվություն կծանրանա մեր՝ հոգևորականներուս ուսերուն վրա։

Այս գիտակցությամբ մեր ուժերը պետք է մեկտեղենք և հնարավոր չափով ավելի կատարյալ ըլլանք մեր պարտականություններու կատարման ճանապարհին։ Պարտավոր ենք ուշադիր ըլլալու ամեն մեկս մեր վրա, որպեսզի առավելագույն չափով մեր բուն նպատակին ծառայենք, և մեր առաքելությունը չտուժե։ Արտասահմանի հայության ապագան շատ բանով կախված է մեր եկեղեցիեն և մեր եկեղեցվո սպասավորներեն։ Մենք գիտենք թե այնտեղ ուր հոգևորականները ժրաջանությամբ կաշխատին, անձնազոհությամբ, գաղափարական թռիչքով, նվիրումով, անշահախնդրությամբ, այնտեղ գործերը լավ կընթանան։

Նուրբ պարագա մը ևս կուզենք շոշափել այստեղ։ Այն է՝ մեր հոգևո-

րականության դիրքավորումը ազգային-քաղաքական հարցերու առնչությամբ: Պարզ է, որ արտասահմանի տարածքի վրա, այս տեսակետեն, գաղափարական, կուսակցական տարբեր հոսանքներ և շերտավորումներ կան, և ատիկա բնական երևույթ է: Արդ, հարց կարելի է տալ՝ ի՞նչ պիտի ըլլա հայ հոգևորականի դիրքը այդ կապակցությամբ: Մեր կարծիքով, հայ հոգևորականը պետք չէ կուսակցական-կողմնակցական որևէ դիրք որդեգրե: Մեր առաքելությունը կուսակցական չի կրնար ըլլալ: Հոգևորականը որևէ կողմի պետք չէ պատկանի: Հոգևորականի առաքելության բուն էությենեն կբխի այդ անհրաժեշտությունը: Եթե հոգևորականը կողմ ըլլա, այդ կնշանակե մյուս կողմին հակառակ ըլլալ, և ատիկա իր առաքելությունը կվտանգե: Որով, հոգևորականը իր մասնակցությունը, իր գործակցությունը, իր խոսքը պետք է բերե բոլոր այն ձեռնարկներու, որոնց շուրջ վեճ չկա, որոնց շուրջ կողմեր չկան: Օրինակով խոսելու համար ըսենք. մենք ազգային տոնակատարություններ ունինք տարվան ընթացքին, որոնք կբնորոշեն հայ հանրային կյանքի դիմագծությունը: Օրինակ՝ Վարդանանց պատերազմի տոնակատարությունը: Մեր ժողովրդի ծոցին մեջ ոչ մեկ վեճ կամ տարակարծություն կա այդ մասին: Հետևաբար հայ հոգևորականը առաջին գծի վրա պիտի ըլլա անշուշտ, Վարդանանց պատերազմի տոնակատարությանց առիթով: Նույնը կարելի է ըսել Ապրիլ 24-ի նահատակաց սգատոնի կամ Սարդարապատի ճակատամարտի ոգեկոչումի մասին: Ահավասիկ այսպիսի և այլ նման ձեռնարկներու առիթով է, որ հայ հոգևորականը իր գործոն ու եռանդուն մասնակցությունը պետք է բերե:

Հայ հոգևորականը այնտեղ է, ուր բաժանումներ չկան, ուր կողմեր չկան:

Երրորդ առաջադրանք մը, որ երբեմն մեր հոգևորականները կանտեսեն, եկեղեցվո բեմն է, այսինքն քարոզխոսությունը: Մեր եկեղեցվո մեջ, մեր տկար կողմերեն մեկն է այս, թե՛ արտասահմանի և թե՛ Հայաստանի մեջ: Այդ տկարությունը քիչ մը հինեն կուգա: Մեր նոր սերունդները, երիտասարդները, որոնք մեր օրերուն ուսում առած են, ընդհանուր զարգացում ունին, բնականաբար կսպասեն նաև խնամված կենդանի խոսք լսել եկեղեցիներու բեմերեն: Քարոզը պետք է նկատել անբաժանելի մասը պատարագի արարողության:

Կշարունակենք Մեր խոսքը:

Գուցե կհետաքրքրվիք, թե ի՞նչ վիճակի մեջ են Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարաբերությունները Անթիլիասի հետ: Հարց մըն է ասիկա, որ վստահ ենք դուք ալ կապրիք: Այս մասին կարող ենք ըսել, թե հիմնականին մեջ ոչինչ փոխված է, մենք այն վիճակի մեջ ենք, որուն մեջ կգտնվինք տարիներ շարունակ: Մեկ տարբերությամբ սակայն, որ այսօր անցյալի ձգտյալ վիճակը մեղմացած է, մանավանդ Լիբանանի անցյալ տարվա տխուր իրադարձություններեն հետո:

Անթիլիասի Կիլիկյան Աթոռը քայլ մը ըրավ, իր կանոնադրութենեն դուրս հանելով այն հոդվածները, որոնք կվերաբերեին էջմիածնական թեմերու միացումին Անթիլիասի: Եվ այժմ կմնա բնականաբար այդ հոդվածներու վերացումը իրականության վերածել, այսինքն գրավված թեմերու հարցը լուծել Մայր Աթոռին վերադարձնելով զանոնք: Մենք կզգանք թե ցանկություն կա օրինական լուծում գտնելու և վերահաստատելու միությունը մեր եկեղեցվո: Ահա այդ նպատակով է, որ այս աշնան հոկտեմբերի 6-ին ս. Էջմիածին հրավիրած ենք Անթիլիասի ներկայացուցիչները, որպեսզի մեր

ներկայացուցիչներուն հետ միասին, քննարկեն այս հարցը և աշխատին ճամփա մը բանալ դեպի վերջնական լուծումը և վերականգնումը հայ եկեղեցվո ներքին միության և համագործակցության մեր նվիրապետական Աթոռներու միջև, ամեն Աթոռ գործելով իր իրավասությունների սահմաններուն մեջ, ամենայն հայոց հայրապետության հոգևոր գերագույն հեղինակության ներքև:

Կմնա Մեզի ի սրտե աղոթել, որ այդ հանդիպումը բարի արդյունքներ տա, և մենք կարողանանք, եթե ոչ մեկ անգամեն, քայլ առ քայլ մոտենալ մեր օրինավոր բաղձանքներու իրականացման:

Ահա այն ամենը, ինչ որ կմտածեինք խոսիլ ձեզի այս առիթով:

Վերջացնելով, վերստին Մեր ողջույնը և օրհնությունը կբերենք բոլորիդ և Մեր մասնավոր գնահատանքը գերաշնորհ Սերովբե արքեպիսկոպոսին, որ այս առիթը ստեղծեց:

Սիրելիներ Մեր, բոլորիդ կմաղթենք մշտարթուն կեցվածք, աշխատանքի եռանդ, մանավանդ նվիրում և սեր դեպի մեր սուրբ եկեղեցին և դեպի Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, որոնք մեր ազգի ամբողջ պատմության ամենամեծ ոգեկան ժառանգությունները կհանդիսանան:

Ազգային շատ հպարտություններ ունինք մենք, բայց, Մեր կարծիքով, գերագույնը, ամենեն մնայունը, ամենեն դիմացկունը, ամենեն անփոփոխը, ամենեն ավելի մեր ազգի հավիտենականությունը խորհրդանշողը, մեր Հայաստանյայց առաքելական մայր եկեղեցին է:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և երկրպագուս անուանդ քում սրբոյ, պահեա՛ ի խաղաղութեան». ամեն:

Իր պատգամն ու օրհնությունը տալուց հետո Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց համագումարի աշխատանքներին և հեռացավ ժողովասրահից:

Համագումարը շարունակեց իր աշխատանքները: Խորհրդակցությունում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Միլանոյի հայոց հոգևոր հովիվ տ. Սարգիս քահանա Սարգիսյանը:

Օրակարգում դրված հարցերի քննարկման առիթով խորհրդակցությունը ընդունեց համապատասխան որոշումներ:

Ժամը 17.30-ին համագումարի փակման առիթով Փարիզի ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հսկումի արարողություն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Նույն օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Փարիզի քաղաքագլուխ, Նորին Վսեմություն Ժակ Ծիրակին: Փարիզի մեծահարգ պրն. քաղաքագլուխը մասնավոր պաշտոնական ճաշկերույթով պատվեց Հայոց Հայրապետին Փարիզի քաղաքապետարանում: Ճաշկերույթին ներկա էին օտար և հայ բազմաթիվ պաշտոնական անձնավորություններ՝ շուրջ 100 հոգի:

Ճաշկերույթի ընթացքում քաղաքագլուխ Ժակ Ծիրակը Հայոց Հայրապետին ողջունեց հետևյալ գեղեցիկ ուղերձով.

ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՈՒՂԵՐՁԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Ձերդ Սրբություն,

Նորին գերազանցություններ,

Տիկնայք և պարոնայք,

Սեն-Դընիի բազիլիկայի սալաքարերի տակ, որտեղ թաղված են մեր թագավորները, հանգչում է մարմինը Լևոն Ե Լուսինյանի, որը, հակառակ իր ֆրանսիական ծագումին, վերջին թագավորը եղավ Հայաստանի:

Իրենց թագավորի և նրա աճյունի նկատմամբ ցույց տրված այս մեծարանքի փոխարեն, հայերը ամենահավատարիմ բարեկամությունն են հանդես բերել Ֆրանսիայի հանդեպ և նրա համար թափել են լավագույնը իրենց արյան ամեն անգամ, երբ վտանգված են եղել նրա ազատությունները:

Ուստի, բնական է, որ Փարիզը՝ նրա մայրաքաղաքը, ընդունելով այսօր հայ ժողովրդի հոգևոր պետ Նորին Սրբություն Վազգեն Առաջինին՝ շրջապատված իր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով, պարտք զգա ջերմորեն և երախտագիտությամբ պանծացնելու այդ կայուն և թանկագին բարեկամությունը:

Արդարև, քիչ ժողովուրդներ կան, որոնց հանդեպ պատմությունը այնքան անողոք գտնված լինի: Օժտված լինելով մարտական բացառիկ հատկություններով, բայց գտնվելով միմյանց մրցակից երկու կայսրությունների միջև՝ հայ ժողովուրդը ճանաչել է անկախության և անհաշիվ կողոպուտներով ու կոտորածներով բնորոշվող հպատակությունների իրարահաջորդ շրջաններ:

Ո՞վ կարող է մոռանալ այն ահավոր ցեղասպանությունը, որին ենթարկվեց նա երկու անգամ և որի սարսափը դեռևս զգացվում է Ֆրանսիայում և գուցե առանձնապես Փարիզում, որտեղ շուտով կանգնեցվելու է մի կոթող ի հիշատակ բյուրավոր հայ նահատակների:

Հակառակ այսքան արհավիրքների և փորձությունների, հայ ժողովուրդը վերապրեց: Նա կարողացավ պահպանել իր հավատքը, իր լեզուն, իր սովորույթները, իր անցյալին կապված լինելու հպարտությունը և մշակեց ջերմ հայրենասիրության առաքինություններ: Կտրված լինելով Եվրոպայից աշխարհագրությամբ և թշնամի ժողովուրդների պատնեշով՝ նա կարողացավ սակայն ստեղծել ինքնատիպ մի մշակույթ, որը պատկանում է եվրոպական մշակույթի գանձարանին և իր արժեքավոր նպաստն է բերում նրան:

Այս տառապած ժողովրդի պատմությունն անխզելիորեն կապված է իր եկեղեցու պատմության հետ: Ձերդ Սրբությունը, հետևաբար, իր անձի մեջ մարմնավորում է թե՛ ձեր ժողովուրդը և թե՛ ձեր եկեղեցին այն ամբողջ հեղինակությամբ, որը կապված է Ձեր հոգևոր բարձր աստիճանի հետ:

Բարեհաճեցեք ուրեմն ընդունել այն հարգանքը, որ իմ միջոցով Փարիզն այսօր ընծայում է Ձեզ, և ես երջանիկ եմ, որ ինձ վիճակված է թարգմանը հանդիսանալ այն հարգալից բարեկամության և խոր համակրանքի, որ նա զգում է ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ»:

Ի պատասխան Փարիզի մեծարգո քաղաքագլխի ողջույնի ուղերձի, Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ ճառով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ
(1 հունիսի 1979 թ.)

Մեծահարգ տիար Քաղաքապետ,

Հարգարժան տիկնայք և պարոնայք,

Ինձ համար մեծ ուրախություն է և պատիվ գտնվիլ այստեղ, Փարիզի քաղաքապետական պալատին մեջ, ուր կբաբախե ազնիվ սիրտը այս լույս քաղաքին: Այս պատիվը կուղղվի առավելապես այն եկեղեցիին, որուն առաջին սպասավորն եմ ես, և այն ժողովուրդին, որուն զավակն եմ: Այս հրավերին, այս ջերմ ընդունելության համար երախտապարտ եմ Ձեզի, մեծահարգ Քաղաքապետ:

Ես կուգամ հեռավոր երկրե մը, Արարատի երկրեն, Հայաստանեն, քրիստոնյա Հայաստանեն, ուր առաջին իսկ դարուն շողաց լույսը Քրիստոսի Ավետարանի, երբ մեր ժողովուրդը իր սիրտը լայն բացավ նոր հավատքին ու այդ հավատքով վերածնած, իր ինքնությունը գտավ, դարձավ քրիստոնեական մշակույթ ստեղծող ազգություններեն մին պատմության բեմին վրա:

Եթե քարտեզին վրա հայացք մը նետեք, պիտի հասկնաք թե ինչո՞ւ հայ ժողովուրդը այնքան սուղ վճարեց քրիստոնյա մնալու իր մեծ սխրանքը: Ավելի քան հազար տարիներ շարունակ հայ եկեղեցին ու ժողովուրդը իրենց մարմնո նահատակության իսկ գնով պաշտպանեցին Քրիստոսի Ավետարանը և իրենց ազատությունը՝ բռնության ու խավարի ուժերու դեմ:

Ահա թե ինչու, մեզի՝ հայերուս համար այնքան հարազատ է Փարիզ քաղաքի խորհրդանշանը, միշտ ընկղմելու վտանգի տակ գտնվող, բայց երբեք չընկղմող պատկերը նավին, որ fluctuat nec mergitur:

Փարիզ քաղաքի հավերժությունը խորհրդանշող այս պատկերը կմխիթարե մեզ՝ բոլոր հայերս, պահ մը մոռցնել տալով դարեր ու դարեր տևող մեր եկեղեցվո ու ժողովուրդի տառապանքներն ու զոհաբերումները, պահ մը մոռցնել տալով մեր պատմության մեծագույն ողբերգությունը, հայ ժողովուրդի դեմ գործված ցեղասպանությունը 1915—16 տարիներուն, երբ զոհվեցան շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյաներ և ավերակի վերածվեցավ Արևմտյան պատմական Հայաստանը:

Բայց երկնային արդարությամբ անգամ մը ևս ճշմարտվեցավ խորհուրդը ընկղմելու վտանգին ենթարկված նավին, որ fluctuat nec mergitur: Ահա հայ ժողովուրդը, այսօր վերածնած իր իսկ մոխիրներեն, նոր կյանք կկերտե, ցեղասպանութենե ազատած Արևելյան Հայաստանի մեջ: Այսօրվան Սովետական Հայաստանը արագորեն կաճի, ուր հայ ժողովուրդը ազատորեն կզարգացնե իր ազգային մշակույթը, լուսավոր դրսևորումներով:

Խաղաղության և ապահովության պայմաններու մեջ իր նոր կյանքը կապրի նաև մեր ազգային եկեղեցին, հայ առաքելական եկեղեցին, իր պատմական կեդրոնով, ս. Էջմիածնով, ուրկե կուգամ ես այսօր: Ահա թե ինչու ճշմարիտ է իմ վկայությունը, թե կուգամ քրիստոնյա Հայաստանեն:

Հիմնվելով իմ քսանչորս տարիներու հովվապետական փորձառության վրա, ես համոզված եմ թե քրիստոնեական հավատքը կոչված է նաև մեր օրերուն և ապագային, իր անփոխարինելի նպաստը բերելու մարդկության ոգեկան-բարոյական զարգացման ճանապարհին, առանց հակադրվելու գիտության նվաճումներուն և ընկերային-տնտեսական նոր զարգացումներուն:

Քրիստոսի Ավետարանը բաց գիրք մըն է բոլորի համար և բոլոր ժամանակներու համար:

Այս հանդիսավոր առիթով թույլ տվեք, մեծահարգ քաղաքապետ, ներկայացնել Ձեզի երախտագիտությունը ոչ միայն իմ, այլ նաև Փարիզի մեջ բնակություն հաստատած հայ եկեղեցվո հավատացյալներուն, որոնք, ինչպես ամբողջ Ֆրանսայի իրենց դաշնակիցները, կապրին ու կգործեն իբրև օրինապահ և շինարար քաղաքացիները այս մեծ երկրին, փայելելով ամեն ազատություն պահպանելու և զարգացնելու իրենց կրոնական համայնական կյանքը և իրենց մշակութային ազգային արժեքները: Աշխարհի վրա ամեն տեղ, բայց մանավանդ Ֆրանսայի մեջ հայերը հույժ երջանիկ կերպով կարողացած են զուգակցել ֆրանսական մեծ մշակույթի արժեքները իրենց ազգային արժեքներուն, մեկը մյուսով առավել լուսավորելով:

Մեր սրտի բովանդակ ջերմությամբ կաղոթենք, որ բարին Աստված միշտ խաղաղության ու ծաղկումի մեջ պահպանե փառքերու երկիր Ֆրանսան ու միշտ աճեցնե հանճարի լույսը ֆրանսացի ազգին:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին հուշանվերներ:

Այս առթիվ Հայոց Հայրապետը պրն. քաղաքագլխին նվիրեց Հայաստանում պատրաստված բյուրեղապակյա մի գեղեցիկ սկահակ՝ Արարատի նկարով, Նոյան տապանով և խաղաղության աղավնիով՝ կտուցին՝ ձիթենու ճյուղ: